

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԴԻՄԱԿԱՅԵՄ ԱՊԱԳԱՆ
Կյանքի ամենադժվար հարցերի պատասխանները – Մաս 8
«...մարդս չգիտի թե ինչ է լինելու, և թե ինչպես է
լինելու, ո՞վ է կարող իմացնել նրան.» Ժողովող 8:7

Ա- Ի՞նչ չպետք է անել

○ Մի պարծենար վաղվա օրովը

«Մի պարծենար վաղվա օրովը, որովհետև չգիտես թե
օրը ինչ կ'ձնի.» Առակաց 27:1

○ Մի մատահոզվիր վաղվա համար

«Էզուցվա համար հոգս մի անեք, որովհետև էզուցվա
օրն իր համար հոգս կանի, օրվա համար բավական է
իր նեղությունը.» Մատթեոս 6:34

○ Այսօրվա գործը վաղվան մի թողնիր, մի
հետաձգիր

«Քամիին մտիկ անողը սերմը չի ցանի և ամպերին
նայողը չի հնձի.» Ժողովող 11:4

Բ- Ինչպե՞ս դիմակայեմ անհայտ ապագան

Աստծո խրատը Հեսուին (Հեսու 1:1-11)

1. Ծրագրիր

«Իմ ծառա Մովսեսը մեռավ. և հիմա վեր կաց անցիր
այդ Հորդանանովը, դու և այս բոլոր ժողովուրդը ...
Բոլոր տեղերը որ կոխեն ձեր ոտքի թաթերը, ձեզ
պիտի տամ, ինչպես որ Մովսեսին ասել եմ.» 2-3

«Հեսուն պատվիրելով ասեց...Ձեզ համար պաշար
պատրաստեցեք.» Համար 11

«...խոհեմությամբ արա պատերազմը.» Առակաց 20:18

«Մարդիս սիրտը խորհում է իր ճանապարհը, բայց
նրա քայլերը Տերն է հաստատում.» Առակաց 16:9

Իմ ծրագիրը -----

2. Հաստատ մնա Աստծո խոսքին

«Չորացիր և շատ քաջ եղիր, որ պահես և անես այն
ամեն օրենքի պես... նրանից չխոտորվես աջ կամ
ձախ, որ ամենումն էլ խելամուտ լինես ուր որ գնում
ես.» Համար 7

«Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և
ցերեկ նրան վրա մտածես, որ պահես և կատարես
բոլոր նրա մեջի գրվածի պես, որովհետև այն
ժամանակ ճանապարհներդ հաջողակ կանես, և այն
ժամանակ խելամուտ կլինես.» Համ 8

«Մարդինն են սրտի տրամադրությունները, բայց
Տերիցն է լեզվի պատասխանը.» Առակաց 16:1

Իմ հատկացրած ժամանակը Աստծո խոսքին -----

3. Քայլիր հավատքով

«Չորացիր և քաջ եղիր...» Համար 6, 7, 9

«Ահա քեզ պատվիրում եմ, զորացիր և քաջ եղիր, մի
վախենար և մի զարհուրիր. որովհետև քո Տեր
Աստվածը քո հետ է ուր որ գնաս.» Համար 9

«Հենց քո քահանաների ոտքերը ջրի եզերքին
մխեցավ... այն ժամանակը վերևիցն իջող ջրերը
կանգնեցին.» Հեսու 3:15-16

Իմ հավատքը Աստծո նկատմամբ -----

«Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով.»
Փիլիպպեցիս 4:13